ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 64-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 29-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1.1. Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 90-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 26-ի N 70-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 101-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.4. Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու՝ բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.5. Տեղական վճարի արտոնություն սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.6. Անշարժ գույքի հարկի արտոնություն սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.7. Ջերմուկ համայնքում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտներ անվանակոչելու (համարակալելու) մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ն. Գրիգորյան

1.8. Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 27-ի N 45-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ն. Գրիգորյան

1.9. Լավրենտ Վահրամի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ն. Գրիգորյան

1.10. «Արևաճուկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ն. Գրիգորյան

1.11. Էմին Գագիկի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ն. Գրիգորյան

1.12. Վարուժան Վալերիկի Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ն. Գրիգորյան

1.13. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 20-ի N 218-Ա և 2026 թվականի օգոստոսի 28-ի N 285-Ա որոշումները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ն. Գրիգորյան

1.14. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության սպասարկման կենտրոնի գործունեությունը ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից ներկայացված փոխըմբռնման հուշագրի նախագծի մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Գ. Թադևոսյան

1.15. ՀՀ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի՝ համայնքի շահերի պաշտպանության հայց հարուցելու վերաբերյալ առաջարկությունը քննարկելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Գ. Թադևոսյան

1.16. Դրամական հատկացումներ կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.17. Ջերմուկ համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 65-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 90-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի «Պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները սահմանելու մասին» N 1485-Ն և 2007 թվականի փետրվարի 1-ի «Առողջապահական, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին» N 201-Ն որոշումը և Կրթության կառավարման պետական լիազորված մարմնի գրավոր համաձայնությունը (մտից N 1625, 16.09.2026 թ.)՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 78-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 90-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ «Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ, «Գնդեվազի մանկապարտեզ», «Ջերմուկ համայնքի Ռ. Մելիքյանի անվան արվեստի դպրոց» և «Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ների հաստիքացուցակները հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1, N 2, N 3 և N 4 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի սեպտեմբերի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՋԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

Հավելված 1
Ջերմուկ համայնքի ավագանու 2026
թվականի սեպտեմբերի 29-ի N 65-Ա
որոշման

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ««ԶԱՏԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Դրույքի չափը (դրամ)	Ընդամենը աշխատավարձ (դրամ)
1	*2*	*3*	*4*	*5*
1	Տնօրեն	1	279,400	279,400
2	Մեթոդիստ՝տնօրենի ուսումնական գծով տեղակալ	1	223,520	223,520
3	Գլխավոր հաշվապահ	1	223,520	223,520
4	Տնտեսվար	1	130,000	130,000
5	Գործավար	1	195,520	195,520
6	Խոհարար	2	130,000	260,000
7	Խոհարարի օգնական	1	130,000	130,000
8	Լվացարար	1	130,000	130,000
9	Հավաքարար	2	130,000	260,000
10	Օժանդակ բանվոր	1	130,000	130,000
11	Փականագործ-էլեկտրամոնտյոր	1	130,000	130,000
12	Պահակ	3	130,000	390,000
13	Դաստիարակ	8.19	145,000	1,187,550
14	Երաժշտության դաստիարակ	1.75	145,000	253,750
15	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	145,000	145,000
16	Մանկավարժա-հոգաբանական ծառայություն մատուցող մասնագետ	1	145,000	145,000
17	Պարուսույց	1	145,000	145,000
18	Լրացուցիչ կրթական ծառայությունների մանկավարժ	1.4	145,000	203,000
19	Բուժքույր	2	130,000	260,000
20	Դաստիարակի օգնական	7	130,000	910,000
23	Պահեստապետ	0.5	130,000	65,000
Ընդամենը		**39.84**	**3,221,960.00**	**5,796,260.00**

Հավելված 2
Ջերմուկ համայնքի ավագանու 2026
թվականի սեպտեմբերի 29-ի N
65-Ա որոշման

«ԳՆԴԵՎԱԶԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Դրույքի չափը (դրամ)	Ընդամենը աշխատավարձ (դրամ)
1	*2*	*3*	*4*	*5*
1	Տնօրեն	1	219,400	219,400
2	Գլխավոր հաշվապահ	0.5	175,520	87,760
3	Տնտեսվար	0.25	130,000	32,500
4	Խոհարար	1	130,000	130,000
5	Խոհարարի օգնական	0.5	130,000	65,000
6	Լվացարար	0.25	130,000	32,500
7	Հավաքարար	0.5	130,000	65,000
8	Օժանդակ բանվոր	0.25	130,000	32,500
9	Պահակ	3	130,000	390,000
10	Դաստիարակ	1.17	145,000	169,650
11	Երաժշտության դաստիարակ	0.25	145,000	36,250
12	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0.25	145,000	36,250
13	Մանկավարժա-հոգեբանական ծառայություն մատուցող մասնագետ	1	145,000	145,000
14	Պարուսույց	0.25	145,000	36,250
15	Լրացուցիչ կրթական ծառայությունների մանկավարժ	0.2	145,000	29,000
16	Բուժքույր	1	130,000	130,000
17	Դաստիարակի օգնական	1	130,000	130,000
Ընդամենը		**12.37**	**2,434,920**	**1,767,060**

Հավելված 3
Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 29-ի N 65-Ա որոշման

«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Դրույքի չափը (դրամ)	Ընդամենը աշխատավարձ (դրամ)
1	*2*	*3*	*4*	*5*
1	Տնօրեն	1	244,400	244,400
2	Հաշվապահ	0.5	195,520	97,760
3	Գործավար	0.5	195,520	97,760
4	Տնտեսվար	1	130,000	130,000
5	Հավաքարար	2	130,000	260,000
6	Երգչախմբի ղեկավար	1	145,000	145,000
7	Դասատու	11.99	145,000	1,738,550
Ընդամենը		**17.99**	**1,185,440**	**2,713,470**

Հավելված 4
Ջերմուկ համայնքի ավագանու 2026
թվականի սեպտեմբերի 29-ի N 65-Ա
որոշման

«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ»
ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Դրույքի չափը (դրամ)	Ընդամենը աշխատավարձ (դրամ)
1	*2*	*3*	*4*	*5*
1	տնօրեն	1	279,400	279,400
2	հաշվապահ	0.5	223,520	111,760
3	գործավար	0.5	223,520	111,760
4	տնտեսվար	1.5	130,000	195,000
5	հավաքարար	1.5	130,000	195,000
6	երգչախմբի ղեկավար	1	145,000	145,000
7	դասատու	18.05	145,000	2,617,250
Ընդամենը		**24.05**	**1,276,440**	**3,655,170**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 66-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 26-ի «Ջերմուկի համայնքապետարանի հաշվեկշռում առկա տրակտորը և կցորդները վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին»N 70-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման

ա/ վերնագրից հանել «ՏՐԱԿՏՈՐԸ ԵՎ» բառերը,

բ/ 1-ին կետից հանել «Беларус 82.1 մակնիշի անիվավոր տրակտորը,» բառերը և կետադրական նշանը,

գ/ 1-ին կետում «մայիս–սեպտեմբեր ամիսներին» բառերը փոխարինել «15.08.2026-30.09.2026թթ (մեկ ու կես ամիս) ժամանակահատվածի համար» բառերով, «450 000 (չորս հարյուր հիսուն հազար» թիվը փոխարինել «36 000 (երեսունվեց հազար)» թվով:

2. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին համայնքի ավագանու՝ սույն որոշման 1-ին կետում նշված որոշման հիման վրա կնքված շարժական գույքի վարձակալության պայմանագրում կատարելու համապատասխան փոփոխություններ, ինչպես նաև 3 (երեք) տարով երկարաձգելու պայմանագրի ժամկետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից և տարածվում է 2026 թվականի օգոստոսի 15-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 67-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 101-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով 2026 թվականի հուլիսի 3-ին ընդունված ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-404-Ն և ««Համայնքային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-393-Ն օրենքները՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի ««Ջերմուկ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու, Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի N 15-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 101-Ա որոշմանմեջ կատարել փոփոխություն. որոշման N 2 հավելվածի 7-րդ տողում «Աշխատակազմի քարտուղար» բառերը փոխարինել «Աշխատակազմի ղեկավար» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10

ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

Դեմ- 0 Ձեռնպահ- 0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 68-Ն

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ՝ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեի ծախսային մասում վարչական մասի պահուստային ֆոնդի՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002-«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891-պահուստային միջոցներ» տնտեսագիտական հոդվածը նվազեցնել 32.0 մլն (երեսուներկու միլիոն) դրամով, որից՝

ա/ 16.0 մլն (տասնվեց միլիոն) դրամն ուղղել վարչական բյուջեի «04-05-01-51-ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում» գործառնական դասակարգման «5113-շենքերի և շինությունների կապիտալ նորոգում» տնտեսագիտական հոդվածին՝ համայնքում միջհամայնքային ճանապարհների փոսալցման,

բ/1.0 մլն (մեկ միլիոն) դրամն ուղղել «04-05-05-53-վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրություն» գործառնական նշանակության «4861-այլ կապիտալ ծախսեր» տնտեսագիտական հոդվածին՝ «Ջերմուկ համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկում աստիճանավադնակների տանիքածածկի կառուցման,

գ/ 10.0 (տաս միլիոն) դրամն ուղղել «08-01-01-52-հանգստի գոտիների պահպանում» գործառնական դնշանակության «4213-կոմունալ ծառայություններ» տնտեսագիտական հոդվածին՝ Ջերմուկ քաղաքի կանաչ տարածքներում ծառերի էտման և ձևավորման աշխատանքների իրականացման,

դ/ 5.0 (հինգ միլիոն) դրամն ուղղել «09-02-01-51-հիմնական ընդհանուր կրթություն» գործառնական նշանակության «4639-այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածին՝ 2026-2027թթ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակում դպրոցների մանկավարժների և աշակերտների տրանսպորտային ծախսերի փոխհատուցմանը:

2. Հաստատել Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեի՝ սույն որոշմամբ կատարված փոփոխությունները՝ ի գիտություն ընդունելով Ջերմուկ համայնքի 2026 թվականի բյուջեն՝ ս/թ սեպտեմբերի 25-ի դրությամբ՝

Ընդամենը՝ եկամտային մաս՝ 991,466.3 հազար ՀՀ դրամ

ծախսային մաս՝ 991,466.3 հազար ՀՀ դրամ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 69-Ա

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոցի կերպարվեստի բաժնի սան Ժաննա Մարտինի Բարսեղյանի ծնողական վճարի նկատմամբ սահմանել արտոնություն՝ազատել հաշվարկված 27000 (քսանյոթ հազար) դրամ տեղական վճարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -10

ԱՋԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 70-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ Հարկային օրենսգիրքի 230-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 30-ի «Ջերմուկ համայնքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու կարգը սահմանելու մասին» N 47-Ն որոշումը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Արտոնություն սահմանել՝ «Ջինջ Արփա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ազատելով սեփականության իրավունքով իրեն պատկանող «Արփա-2» և «Արփա-3» փոքր հիդրոէլեկտրակայանների անշարժ գույքի հարկի վճարումից՝ հաշվի առնելով 2022 թվականի սեպտեմբերյան ադրբեջանական ռազմական ագրեսիայի հետևանքով ՓՀԷԿ-ների՝ հակառակորդի ազդեցության գոտում մնալու և նշված անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) անորոշ ժամանակով պահպանվելու հանգամանքը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված արտոնությունը կիրառվում է ս/թ սեպտեմբերի 1-ից մինչև հարկման օբյեկտների նկատմամբ ֆորս մաժորային իրավիճակի հաղթահարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10

ԱՋԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

Դեմ – 0 Ձեռնպահ - 0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 71-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ (ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 3-րդ բաժինների պահանջների՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի նախկին մշակույթի տան և միջնակարգ դպրոցի միջնամասով անցնող, բնակավայրի տրանսպորտային ցանցի մաս կազմող՝ տրանսպորտային միջոցների և մարդկանց շարժման համար նախատեսված տարածքը անվանակոչել (համարակալել) որպես՝ 10-րդ փողոց (*Ջերմուկ համայնք, գ. Կեչուտ, 10-րդ փողոց*):

2. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի Մամարզա հանդամասի Մայրաց փողոցից դեպի այստեղ գտնվող ձկնաբուծական տնտեսություն մուտք գործող նեղ, ոչ լայն փողոցը անվանակոչել (համարակալել) որպես՝ Մայրաց փողոցի 1-ին նրբանցք (*Ջերմուկ համայնք. գ. Գնդեվազ, Մայրաց փողոցի 1-ին նրբանցք)*:

3. Ամուլսարի ոսկու ծրագրով շահագործվող հանքավայրի՝ կառուցապատված տարածքը անվանակոչել որպես «*Ջերմուկ համայնք, գյուղ Գնդեվազ, Հանքավան թաղամաս*»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում էլեկտրոնային եղանակով ՀՀ Կադաստրի կոմիտեի հասցեների միասնական ռեեստրի տեղեկատվական համակարգ ներբեռնելու պահից:

Կողմ -10

ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 72-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 45-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հաշվի առնելով «Մար-Մոս» ՍՊԸ գնահատման ընկերության կողմից ներկայացված հաշվետվությունները՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 27-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին» N 45-Ա որոշման մեջ կատարել լրացումներ՝ որոշման հավելվածում ավելացնել 13-ից 21-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ՝

«13/ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 12-րդ փողոցի N 30 հասցեում գտնվող 10-002-0028-0063 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 24062013-10-0014) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման, մակերեսը՝ 0.00198 հա) օտարման նպատակը՝ բնակելի կառուցապատման համար, հողամասի վաճառքի մեկնարկային գինը՝ 220000 (երկու հարյուր քսան հազար) դրամ,

14/ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 12-րդ փողոցի N 17 հասցեում գտնվող 10-002-0028-0060 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 24062013-10-0015) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման, մակերեսը՝ 0.00198 հա) օտարման նպատակը՝ բնակելի կառուցապատման համար, հողամասի վաճառքի մեկնարկային գինը՝ 220000 (երկու հարյուր քսան հազար) դրամ,

15/ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 7-րդ փողոցի N 65 հասցեում գտնվող 10-002-0034-0088 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 07082026-10-0021) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0.00845 հա) օտարման նպատակը՝ բնակելի կառուցապատման համար, հողամասի վաճառքի մեկնարկային գինը՝ 920000 (իննը հարյուր քսան հազար) դրամ,

16/ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 7/10 հասցեում գտնվող 10-002-0029-0114 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 31082026-10-0030) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0.0036 հա) օտարման նպատակը՝ բնակելի կառուցապատման համար, հողամասի վաճառքի մեկնարկային գինը՝ 490000 (չորս հարյուր իննսուն հազար) դրամ,

17/ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 2-րդ փողոցի N 11/1 հասցեում գտնվող 10-002-0030-0045 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 11082026-10-0007) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0.00306 հա) օտարման նպատակը՝ բնակելի կառուցապատման համար, հողամասի վաճառքի մեկնարկային գինը՝ 410000 (չորս հարյուր տաս հազար) դրամ,

18/ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 6-րդ փողոցի N 10 հասցեում գտնվող 10-002-0032-0136 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 06052026-10-0014) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0.00362 հա) օտարման նպատակը՝ բնակելի կառուցապատման համար, հողամասի վաճառքի մեկնարկային գինը՝ 370000 (երեք հարյուր յոթանասուն հազար) դրամ,

19/ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 7-րդ փողոցի N 3 հասցեում գտնվող 10-002-0038-0200 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 07082026-10-0005) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0.006661 հա) օտարման նպատակը՝ բնակելի կառուցապատման համար, հողամասի վաճառքի մեկնարկային գինը՝ 690 000 (վեց հարյուր իննսուն հազար) դրամ,

20/ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 7-րդ փողոցի N 50 հասցեում գտնվող 10-002-0034-0087 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 03042026-10-0021) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0.0032 հա) օտարման նպատակը՝ բնակելի կառուցապատման համար, հողամասի վաճառքի մեկնարկային գինը՝ 290000 (երկու հարյուր իննսուն հազար) դրամ,

21/ Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի 4-րդ փակուղու N 21/1 հասցեում գտնվող 10-002-0029-0113 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 30042026-10-0006) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0.00771 հա) օտարման նպատակը՝ հասարակական կառուցապատման համար, հողամասի վաճառքի մեկնարկային գինը՝ 1040000 (մեկ միլիոն քառասուն հազար) դրամ

22/ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 14-րդ փողոցի N 12 հասցեում գտնվող 10-002-0028-0076 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 05042026-10-0001) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0.01156 հա) օտարման նպատակը՝ բնակելի կառուցապատման համար, հողամասի վաճառքի մեկնարկային գինը՝ 1150000 (մեկ միլիոն հարյուր հիսուն հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 73-Ա

ԼԱՎՐԵՆՏ ՎԱՀՐԱՄԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 15-րդ մասի, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 3.1-ին կետի պահանջներով՝ավագանին **որոշում է՝**

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Լավրենտ Վահրամի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող, ձկնաբուծական արհեստական լճակներով ծանրաբեռնված գյուղատնտեսական նշանակության

ա/ 1,2 հա մակերեսով արոտավայր հողատեսքի (կադաստրային ծածկագիր՝ 10-0016-0284-0006, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 1200782, տրված՝ 16.12.2005 թ.) նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների,

բ/ 0,1 հա մակերեսով բազմամյա տնկարկ հողատեսքի (կադաստրային ծածկագիր՝ 10-0016-0284-0005, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 2171582, տրված՝ 08.06.2007 թ.) նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով կատարվող փոփոխությունները պայմանավորված են Լ. Վ. Հակոբյանին պատկանող հողամասերում ինքնակամ կառուցված ձկնաբուծական արհեստական լճակները օրինականացնելու նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10

ԱՋԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱՋԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

Դեմ – 0 Ձեռնպահ -0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 74-Ա

«ԱՐԵՎԱՁՈՒԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 15-րդ մասի, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 3.1-ին կետի պահանջներով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական սահմաններում գտնվող, «Արևածուկ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող

ա/ գյուղատնտեսական նշանակության 0,1 հա մակերեսով բազմամյա տնկարկ հողատեսքի (կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0605-0005, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 2348751, տրված՝ 23.06.2008 թ.) նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների՝ ձկնաբուծական արհեստական լճակ կառուցելու նպատակով:

բ/ ձկնաբուծական արհեստական լճակներով ծանրաբեռնված գյուղատնտեսական նշանակության 1,2045 հա մակերեսով բազմամյա տնկարկ հողատեսքի (կադաստրային ծածկագիր՝ 10-0016-0605-0006, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 2348752, տրված՝ 23.06.2008 թ.) նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետի «բ» ենթակետով կատարվող փոփոխությունը պայմանավորված է «Արևածուկ» ՍՊ ընկերությանը պատկանող հողամասում ինքնակամ կառուցված արհեստանոց-պահեստի օրինականացնելու նպատակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 75-Ա

ԷՄԻՆ ԳԱԳԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով՝ ավագանին **որոշում է՝**

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական սահմաններում գտնվող, Էմին Գագիկի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0,60143 հա մակերեսով արոտավայրի (կադաստրային ծածկագիր՝ 10-016-0605-0043, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 09062020-10-0014) նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների՝ կնաբուծական արհեստական լճակների կառուցման նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10

ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

Դեմ – 0 Ձեռնպահ - 0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 76-Ա

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱԼԵՐԻԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով՝ ավագանին **որոշում է՝**

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական սահմաններում գտնվող, Վարուժան Վալերիկի Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 1,49345 հա մակերեսով վարելահողի (կադաստրային ծածկագիր՝ 10-016-0295-0003, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 05022026-10-0006) նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների, ճկնաբուծական արհեստական լճակների կառուցման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10

ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

Դեմ – 0 Ձեռնպահ -0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 77-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 218-Ա ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 285-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տա րածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ևփոփոխման կարգը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ղեկավարի հետևյալ որոշումները՝

ա/ 2026 թվականի հուլիսի 20-ի «Դավիթ Լենդրուշի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի N 16/14 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 218-Ա,

բ/ 2026 թվականի օգոստոսի 28-ի «Արսեն Քաջիկի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի N 22/6 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 285-Ա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

Դեմ – 0

Ձեռնպահ – 1
ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 78-Ա

ՈՐՈՇՈՒՄԸ ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, քննարկելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից ներկայացված փոխըմբռնման հուշագիրը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության սպասարկման կենտրոնի (այսուհետ՝ ՔԿԱԳ սպասարկման կենտրոն) գործունեությունն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն առաջարկել վերաշարադրել համայնքի հետ կնքվելիք փոխըմբռնման հուշագիրը՝ ստորև բերվող դիտարկումների հաշվի առնմամբ՝

ա/ ՔԿԱԳ սպասարկման կենտրոնի տարածքի անժամկետ օգտագործման տրամադրման դիմաց սահմանել համապատասխան վարձավճար կամ անհրաժեշտ ծախսերի փոխհատուցման վճար՝ տարածքի կոմունալ ծառայությունների (էլեկտրաէներգիա, ջրամատակարարում, ջեռուցում և այլն) վճարների մարման նպատակով,

բ/ ՔԿԱԳ սպասարկման կենտրոնի գույքի (ներառյալ՝ կահույքը, տեխնիկական սարքավորումները, համակարգչային տեխնիկան, կապի միջոցները և այլն) և արխիվային փաստաթղթերի պահպանման համար նախատեսված առանձին տարածքի (արխիվային պահոցի) տրամադրման պարտավորությունը չվերապահել համայնքին (վերջինի հետ կապված՝ համայնքը ոչ բնակելի ազատ տարածք չունի)

գ/ սահմանել տարածքի օգտագործման ժամկետը, վճարները և ծախսերի փոխհատուցումը վերանայելու տարեկան պարբերականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -0 Դեմ -8 Ձեռնպահ -2

ԱՋԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 79-Ա

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶԻ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով սահմանված սկզբունքներով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ քննարկելով ՀՀ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի՝ ս/թ սեպտեմբերի 17-ի N //24114-2026 գրությունը (մտից՝ N 1635, 18.09.2026 թ.)՝ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Արձանագրելով, որ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման՝ 2012-2013 թվականներին գործող խմբագրության 4-րդ կետի պահանջով «.... *ինքնակամ կառույցների օրինականացման վճարների և (կամ) վաճառքի գների վրա, ըստ գույքի գտնվելու վայրի (տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտի), համապատասխանաբար կիրառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի «Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, անհատական բնակելի տների, այգեփնակների (ամառանոցների) և դրանց կից շինությունների, առանձին կանգնած հասարակական ու արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական և արտադրական նշանակության շինությունների տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցները հաստատելու մասին» N 470-Ն որոշմամբ հաստատված գործակիցները*:», իսկ հիշատակված 17.04.2003 թ. N 470-Ն որոշմամբ (ներկայում չի գործում) Ջերմուկի աջափնյա թաղամասերում ընդգրկված տարածքների տարածագնահատման գոտին 10-րդն է եղել՝ 0,13 գործակցով, փաստել, որ ՀՀ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի կողմից ներկայացված՝ համայնքի շահի պաշտպանության հայցի առաջարկի համատեքստում Ջերմուկ համայնքի ղեկավարի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 237-Ա որոշումը կայացվել է օրենսդրության պահանջին համապատասխան և հայց ներկայացնելու իրավական պատճառ չի դիտարկվում:

2. Սույն որոշման ընդունման մասին իրազեկել Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազ Արմեն Սուրենի Մաթևոսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 80-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաշվի առնելով «Ջերմուկ քաղաքի Մ. Գորկու անվան հիմնական դպրոց» և «Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների տնօրենների դիմում-խնդրանքները՝ Ջերմուկ համայնքի վարչական բյուջեից «9-2-1-51 -հիմնական ընդհանուր կրթություն» գործառնական դասակարգմամբ 4639-այլ ընթացիկ դրամաշնորհներ տնտեսագիտական հոդվածով 2026-2027թթ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի համար հատկացնել համապատասխանաբար 1,998,950 /մեկ միլիոն իննը հարյուր իննսունութ հազար ինը հարյուր հիսուն/ և 1,232,100.0 /մեկ միլիոն երկու հարյուր երեսուներկու հազար հարյուր/ դրամ՝ Ջերմուկ համայնքի քաղաքային բնակավայրի տարբեր թաղամասերից աշակերտների և մանկավարժների տեղափոխումը կազմակերպելու համար՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10

ԱՋԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

Դեմ – 0 Ձեռնպահ - 0

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2026 թ. N 81-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2026 թվականի հոկտեմբերի 20-ին, ժամը՝ 17.00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՋԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՎԱՋՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՀԱՆՅԱՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2026 թ. սեպտեմբերի 29
ք. Ջերմուկ